

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԵՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

* Կիր. 5 Փետր.— Ս. Պատարազը մատուցուեցաւ ի Ս. Գարութին, Ս. Լուսաւորիչ եկեղեցիին մէջ: Ժամարան էր Հոգւ: Տ. Վաղարշ Վրդ. Խաչատուրեան:

* Կիր. 12 Փետր.— Ս. Պատարազը մատուցուեցաւ ի Ս. Գարութին: Ժամարան էր Հոգւ: Տ. Արշէն Արդ. Այվազեան:

* Կիր. 19 Փետր.— Բարեկենդան Առաջադրի Պանոս: Ս. Պատարազը մատուցուեցաւ ի Ս. Գարութին: Ժամարան էր Արթ. Տ. Կարապետ Ա. Քննչ. Անդրէասեան:

* Ուր. 24 Փետր.— Նախատանակին ի Ս. Գարութին: Ժամարան էր Հոգւ: Տ. Լաւրիկ Արդ. Այվազեան:

* Շր. 25 Փետր.— Ս. Սարգսի Զօրավարին, Ս. Պատարազը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Սարգսի Հնազանդան մատրան մէջ: Ժամարան էր Հոգւ: Տ. Սամուէլ Արդ. Այվազեան: Ս. Պատարազէն ետք, ըստ սովորութեան, կատարուեցաւ հոգւ-հնազանդան պաշտօն՝ Ս. Աթոռայա եւ աղբիւ հանգուցեալ մեծանուն ընդերքար Գալուստ Կրկնեկեանի հօր՝ Սարգսի հոգւոյն համար, նախադասութեամբ Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոսին:

* Կիր. 26 Փետր.— Ս. Պատարազը մատուցուեցաւ ի Ս. Գարութին, Ս. Լուսաւորիչ եկեղեցիին մէջ: Ժամարան էր Հոգւ: Տ. Զարեհ Արդ. Բափալեան:

— Տեաներդատալի մեծահանգլէս Նախատանակին եւ Վեդատանքին՝ Մայր Տաճարին մէջ Նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս:

— Իրկինադէմին, Մայր Տաճարին մէջ պաշտուեցան Վեկեցէի եւ Հսկման կարգեր: Հանդիսապետ էր Գերշ. Տ. Նորայր Եպիսկոպոս:

— Գիշերը, ժառանգաւորաց Վարժարանի դպրոցին վրայ կը վառէր Տեաներդատալի աւանդական կրակը, բազմաշարիւր Ժողովուրդի տարած խորհրդանշան տեսարաններու ընդմէջէն:

* Բշ. 27 Փետր.— Տեաներդատալ: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարազը՝ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուց եւ քարոզեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպոս, ծանրամայով Սիմէոն Մեղրուիի՝ Աստուածամօր ուղղած այն խօսքին, թէ Բիւրուս շատերու կանգնումին եւ շատերու գլորման պատճառ պիտի դառնայ: Բացարդեց թէ խկապէս իրականացաւ Սիմէոնի այդ մարգարէութիւնը:

* Կիր. 5 Մարտ.— Ս. Պատարազը մատուցուեցաւ ի Ս. Գարութին, Ս. Լուսաւորիչ եկեղեցիին

մէջ: Ժամարան էր Հոգւ: Տ. Դանիէլ Վրդ. Շամբեան:

* Դշ. 8 Մարտ.— Վարդանանց մեծահանգլէս Նախատանակին ի Ս. Գարութին: Ժամարան էր Հոգւ: Տ. Լաւրիկ Արքեպիսկոպոս:

* Եշ. 9 Մարտ.— Ս. Վարդանանց զօրավարաց մերոց (Յիշատակ մեռելոց եւ սոսն ազգային): Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ Ս. Պատարազը մատուց, ըստ սովորութեան, ժամանց Վարժարանի եւ Ընծայարանի Փոխ Տեսուչը՝ Հոգւ: Տ. Արշէն Արդ. Այվազեան: Քարոզեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս, բնարան ունենալով Վեթի ոչ մարմնական համարէին կոնին, այլ հոգւոյն տառաքնութիւնը: Խոսեցաւ Վարդանանց սերունդի հոգեկան տրուութեան եւ ազգային Նախանձախնդրութեան ողբի մասին: Քարոզէն ետք, նախադասութեամբ Լուսարարապետ Սարգսեան, կատարուեցաւ «Հայրապետական Մայրեան»՝ ի Ս. Օծութին Տ. Տ. Վաղէն Ա. Կաթողիկոսի անուն տանին սաթիւ, իսկ Ս. Պատարազէն ետք, դարձեալ Լուսարարապետ Ս. Զօր Նախադասութեամբ, հոգեհանգստեան հանգիստուր պաշտօն՝ Վարդանանց Նախատանակեց հոգի-նկրուն համար: Ժառանգաւոր սաները Ս. Հոգւորդութիւն ստացան իրենց Տեսչին մեծամբ:

* Ուր. 10 Մարտ.— Ըստ սովորութեան, Ս. Պատարազ մատուցուեցաւ Ուղղափառ Ասորոց Ս. Մարիւտ Աւետարանի եկեղեցիին մէջ: Ժամարան էր Հոգւ: Տ. Պարէա Արդ. Երկեցեան: Քարոզեց Հոգւ: Տ. Դանիէլ Վրդ. Շամբեան, խօսելով բարեկաշտութեան վրայ, ընելով Նաւե պատմականը Ասորոց վանքին: Ս. Պատարազէն ետք Միտրանութիւնս պատուատրուեցաւ Ասորոց Գերշ. Եպիսկոպոսին: Երթուարածի թափօրները դիտարեց Աւագ Քարոզման Հոգւ: Տ. Դեորդ Վրդ. Նազարեան:

* Շր. 11 Մարտ.— Ըստ սովորութեան, Երկուցեան ժամերգութեան ընթացքին կատարուեցաւ Մայր Տաճարի խորաններուն եւ դիտար սրբանկարներուն վարդապետութիւնը:

* Կիր. 12 Մարտ.— Բուն Բարեկենդան: Փակ-խորանի Ս. Պատարազը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ժամարան էր Հոգւ: Տ. Վաղարշ Վրդ. Խաչատուրեան: Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս, ըստ սովորութեան, կը վարէր Դպրապետի պաշտօնը:

* Դշ. 15 Մարտ.— Սկիզբ կարգաց Մեծի Պանոս: Առատուն, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Վերնադարձի առաջին ժամերգութիւնը, իսկ կէսօրէ ետք՝ առաջին Վերադարձան ժամերգութիւնը:

* Եշ. 16 Մարտ.— Իրկինադէմին, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Մեծ Պանոս Վեկեցէի առաջին ժամերգութիւնը, որուն ընթացքին Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս քարոզեց Պահի զոգափառին ծագման եւ պահպանութեան կարեւորութեան շուրջ, հոգւոյն եւ խնայական տեսակէտներէ միանգամայն:

* Ուր. 17 Մարտ.— Նախատանակը պաշտուեցաւ Ս. Աթոռայ Դշաղարաց Մատենադարանը Եղոց Ս.

Թորոս եկեղեցիին մէջ: Հանդիսացեալ էր Զատիկ-
բառան Տեսուչ՝ Գերշ. Տ. Նորայր եպիսկոպոս:

✱ Եր. 18 Մարտ.— Ս. Թեոդորոսի գորավարին:
Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ եւ Ս.
Պատարագը մատուցուեցաւ Ս. Թորոս եկեղեցիին
մէջ: Ժամարարն էր Հոգւ. Տ. Սամուէլ Արդ. Աղոյ-
եան:

— Կէսօրէ կաթ ժամը Յին, վաղուան Արտաք-
ման Կիւսակի տոթով, Ամեն. Պատրիարք Ս. Հօր
գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով
մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր պաշ-
տուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու նախատո-
նակը Ս. Լուսաւորիչ եկեղեցիին մէջ: Ապա կատար-
ւեցաւ Տնօրէնական Սրբաւեղակաց այցելութեան հան-
դիսաւոր Թափօր Տաճարէն ներս: Թափօրացեալն էր
Հոգւ. Տ. Ներսիս Վրդ. Բագուճեան:

✱ Կեր. 19 Մարտ.— Արտաքմամ: Գերայրային
եւ առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան եւ
Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Լուսաւորիչ:
Ժամարարն էր Հոգւ. Տ. Պարէտ Արդ. Երէցեան:
Ապա կատարուեցաւ երբայրած մեծահանգէս Թափօր
Քրիստոսի Ս. Գերեզմանին եւ Պատանոտեղւոյն
չուրջ, գլխաւորութեամբ Ամեն. Պատրիարք Ս. Հօր:

✱ Դշ. 22 Մարտ.— Կէսօրէ առաջ ժամը Տ. 30ին,
Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ Մեծ Պահօց յա-
տուի «Ճաշու» առաջին ժամերգութիւնը:

✱ Եր. 25 Մարտ.— Ս. Կիրիլի Երուսաղիմայ
Հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր
Տաճարի Աւանդատան Ս. Կիրիլի սեղանին վրայ:
Ժամարարն էր Արթ. Տ. Կարապետ Ա. Քննչ. Անդ-
րէասեան:

✱ Կեր. 26 Մարտ.— Ամառակին: Ս. Պատարագը
մատուցուեցաւ ի Ս. Գլխաղբի: Ժամարարն էր Հոգւ.
Տ. Վաղարշ Վրդ. Խաչատուրեան: Քարոզեց Գերշ.
Տ. Նորայր եպիսկոպոս, մեկնարանելով Անտաղի
աւետարանական տոսակը:

✱ Եշ. 30 Մարտ.— Իրեկուսի Լսիլուսին քարո-
զեց Գերշ. Տ. Շահէ եպիսկոպոս, բնարան սենեա-
լով «Հայր, մեղայ յերկինս եւ առաջի քո (Ղուկ.
Ժե. 21): Խօսեցաւ մեղքի մասին գոյութիւն սենե-
ցող զանազան բմբնութեան շուրջ, եղբայրացեալով
թէ մեղքը ծագում կ'առնէ այն վայրկեանէն երբ
առեցաւ կը խոտորի Աստուծոյ իրեն համար դժամ
եւ սահմանած ճանապարհէն, եւ թէ մեղք կը գոր-
ծենք այն առեւ՝ երբ կը զարթնէք ձգտել կատարե-
լութեան:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ Ք

✱ Կեր. 19 Փետր.— Անդրէոյ Ն. Վ. Էլիզապէթ
Բ. Թագուհիի ամուսնոյն՝ Էտիենպուրի Դուքս Իշ-

խան Ֆրիլիխ Երուսաղէմ այցելութեան տոթով,
բաղաբիտ վսեմ. Մուհամմէդին կողմէ Ինթերբոնթի-
նէնթըլ պանդոկի մէջ տրուած ճաշկերոյթին ներկայ
գտնուեցան Լուսաւորացեալ Գերշ. Տ. Հայրիկ Արթ-
եպիսկոպոս եւ Աւագ-Թարգման Հոգւ. Տ. Գէորգ
Վրդ.: Ճաշէն ետք, վսեմ. հիւրը առաջնորդուեցաւ
Ս. Յարութեան Տաճար, ուր նոյնպէս Գերշ. Լու-
սաւորացեալ Սրբազանն ու Աւագ-Թարգմանը այլ
յարանուանութեանց ներկայացուցիչներուն հետ դի-
մաւորեցին գինք:

✱ Դշ. 8 Մարտ.— Իրեկուսի ժամը 6ին: Սուր-
բոյ աղագային տանին տոթիւ, սուրիական ընդհ. հիւ-
պատոսին կողմէ Սէյնթ Ճօրճ պանդոկին մէջ տրու-
ած ընդունելութեան ներկայ գտնուեցաւ Գերշ.
Լուսաւորացեալ Տ. Հայրիկ Արթեպիսկոպոս, ընկե-
րակցութեամբ Հոգւ. Տ. Գէորգ Վարդապետի եւ
Տիար Կ. Հինգլեանի:

✱ Դշ. 14 Մարտ.— Ամսմանի Թրքական դեսպա-
նը, ընկերակցութեամբ Երուսաղէմի Թրքական հիւ-
պատոսին, այցելութեան եկաւ Ամեն. Պատրիարք
Ս. Հօր:

✱ Եշ. 16 Մարտ.— Իրաքի ընդհ. հիւպատոս
Պրն. Անուար Խօճայի կողմէ Սէյնթ Ճօրճ պանդոկին
մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցաւ
Լուսաւորացեալ Գերշ. Տ. Հայրիկ Արթեպիսկոպոս,
ընկերակցութեամբ Հոգւ. Տ. Գէորգ Վարդապետի
եւ Տիար Կ. Հինգլեանի:

✱ Դշ. 21 Մարտ.— Իսլամաց Գուրպան պաշ-
րամի տոթով, Կէսօրէ առաջ, Ամեն. Պատրիարք Ս.
Հայր, ընկերակցութեամբ Լուսաւորացեալ Գերշ.
Տ. Հայրիկ Արթեպիսկոպոսի, Աւագ-Թարգման Հոգւ.
Տ. Գէորգ Վարդապետի եւ Տիար Կ. Հինգլեանի, ըն-
տրահարկական այցելութեան տուաւ բաղաբիտ վսեմ.
Մուհամմէդին, Ոստիկանապետին, Զինուորական
Ընդհ. Հրամանատարին, Բաղաբապետին, Սէնատի
Արարիոյ, Եղիպտոսի, Իրաքի, Սուրիոյ եւ Թուրքիոյ
ընդհ. հիւպատոսներուն:

✱ Դշ. 28 Մարտ.— Եւրոպացաց Ս. Զատիկ տո-
նին տոթով, Կէսօրէ առաջ, Ամեն. Պատրիարք Ս.
Հայր, ընկերակցութեամբ Գերշ. Եպիսկոպոսներու
եւ Հոգւ. Միաբան Հայրերու, շնորհաւորական այ-
ցելութեան տուաւ Ֆրանչիսկեանց Գերշ. Կիւսթոսի
եւ Լաւրնաց Ամեն. Ս. Պատրիարքին: Ապա, ընկե-
րակցութեամբ Դիւանապետ Գերշ. Տ. Շահէ եպիս-
կոպոսի եւ Տիար Կ. Հինգլեանի, այցելեց Պապական
Նուիրակին, Անկլիքան Արթեպիսկոպոսին եւ Արար-
Անկլիքան Եպիսկոպոսին: Իսկ Լուսաւորացեալ Գերշ.
Տ. Հայրիկ Արթեպիսկոպոս, ընկերակցութեամբ
Հոգւ. Հայրերու, այցելեց Յոյն-Կաթոլիկներու Ե-
պիսկոպոսին, Մարոնիթ Համայնքի եւ Հայ-Կաթո-
լիկներու Մեծաւորներուն եւ Լուսաւորականներուն ու
Արար-Լուսաւորականներուն երէցներուն: